Գոհար ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ

«Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի առաջին կուրսի մագիստրանտ, տնտեսագիտական ֆակուլտետ, ՀՊՏՀ

https://orcid.org/0009-0000-3560-9244

ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՇԱՐԺԻՉ

DOI: 10.52174/2579-2989_2025.4-92

Հիմնաբառեր. *արտահանում, վերաարտահանում, ապրանքային կառուցվածք, պատժամիջոցներ, աշխարհաքաղաքական փոփոխություններ*

Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ արտահանման միտումները, ապրանքախմբերի կառուցվածքի և արտահանման ուղղությունների փոփոխությունները՝ 2014-2024 թթ.: Ցույց է տրվել, որ 2022 թվականից ի վեր արձանագրված արտահանման կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է եղել ոչ թե ավանդական ապրանքախմբերի արտահանմամբ, այլ արտահանման կառուցվածքում հայտնված «նոր» ապրանքախմբերով: Տվյալ ապրանքախմբերի արտահանման և ներմուծման ծավալների համեմատությունն արտացոլել է, որ արձանագրված աճը տեղի է ունեցել վերաարտահանման արդյունքում: Կենտրոնացվածության մակարդակն աշխարհագրորեն նույնպես աճել է, քանի որ մեծացել է կախվածությունը ՌԴ-ի, ԱՄԷ-ի և Հոնկոնգի շուկաներից:

Արտահանումը յուրաքանչյուր պետության տնտեսական աճի և արտաքին տնտեսական կայունության նախապայման է: Ավանդաբար, ՀՀ-ում արտահանման ծավալները զիջում են ներմուծման ծավալները:

2022 թվականից սկսած՝ նկատվել է ՀՀ արտահանման ծավալների աճ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով առաջացած շոկով: 2022 թ., նախորդ տարվա համեմատությամբ, արտահանումն աճել է 79.6%-ով, 2023 թ.՝ 57.8%-ով, իսկ 2024 թ.՝ 53,6%-ով: Արտահանման ծավալների աճին զուգահեռ, նկատվել է նաև ներմուծման ծավալների մեծացում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ արտահանման աճը պայմանավորված է եղել վերաարտահանմամբ:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների փոփոխությունը, 2014-2024 թթ. (մլն ԱՄՆ դոլար)[1]

Հակամարտության հետևանքով առաջացած շոկն ազդել է ոչ միայն արտահանման ծավալների վրա, այլև փոփոխել է դրա կառուցվածքն ու ուղղությունները:

2022 թ. արտահանվող 10 ամենամեծ ապրանքախմբերի շարքում ավանդաբար արտահանվող «Ձուկ և խեցգետնավորներ և այլ ծովային անողնաշարավորներ» (3), «Բանջարեղեն, այլ կերային արմատապտուղներ և հատապտուղներ» (7), «Կերա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

2022 թ. արտահանվող 10 ամենամեծ ապրանքախմբերի արտահանման ծավալների փոփոխությունը, 2014-2024 թթ. (մլն ԱՄՆ դոլար)[2]

[1] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների հիման վրա, https://armstat.am/am/

[2] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՄԱԿ-ի (2025) «UN COMTRADE Datebase» առցանց տվյալների բազայի հիման վրա, https://comtradeplus.un.org/

յին հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ, արմատներ և այլ բոստանային մշակաբույսեր» (8) ապրանքախմբերն իրենց տեղերն են զիջել «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր» (85), «Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր և սարքավորումներ» (87), «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր» (84) ապրանքախմբերին: Իսկ «Հանքաքար, խարամ և մոխիր» (26) ապրանքախումբը, որը մշտապես եղել է արտահանվող ապրանքախմբերում առաջատարը, 2022 թվականից ի վեր իր տեղը զիջել է «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» (71) ապրանքախմբին: 2022 թ., նախորդ տարվա համեմատությամբ, «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր» ապրանքախումբն աճել է 21,1 անգամ, «Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր և սարքավորումները»՝ 9,3 անգամ, «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասերը»՝ 6 անգամ, «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղները »՝ 3 անգամ:

Աճ է նկատվել նաև վերոնշյալ ապրանքների ներմուծման ծավալների պարագայում: Մասնավորապես՝ «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր» ապրանքախումբն աճել է 2,3 անգամ, «Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր և սարքավորումները»՝ 3,5 անգամ, «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասերը»՝ 1,7 անգամ, «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղները»՝ 2,8 անգամ:

2024 թ. արտահանման ծավալներում ընդգրկված են եղել ինչպես հայրենական, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ ներսում սպառման և վերաարտահանման համար[3]:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Որոշ ապրանքախմբերի արտահանման և ներմուծման ծավալները, 2022 թ. (մլն ԱՄՆ դոլար)[4]

[3] Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, էջ 523, https://armstat.am/file/doc/99552373.pdf
[4] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՄԱԿ-ի (2025) «UN COMTRADE Datebase» առցանց տվյալների բազայի հիման վրա, https://comtradeplus.un.org/

2022 թվականից ի վեր որոշակի փոփոխության են ենթարկվել նաև արտահանման ուղղությունները:

2022 թվականից սկսած՝ նկատվել է դեպի գործընկեր երկրներ արտահանման կտրուկ աճ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական իրողություններով: Պատժամիջոցների հետևանքով աճել է դեպի Ռուսաստան արտահանումը: Ռուսաստանի մասնաբաժինն ընդհանուր արտահանման կազմում 2022 թ. կազմել է 45,1%, 2023 թ.՝ 41,2% և 2024 թ. նվազել է՝ կազմելով՝ 24%: 2022 թ. արտահանվել են էլեկտրական տրանսֆորմատորներ՝ 6,4 մլն ԱՄՆ դոլար, փոշեկուլներ՝ 8,1 մլն ԱՄՆ դոլար, միկրոֆոններ, բարձրախոսներ՝ 15,7 մլն ԱՄՆ դոլար, մոնիտորներ և պրոյեկտորներ՝ 104 մլն ԱՄՆ դոլար, 4 մլն հատ սմարթֆոն՝ 251,3 մլն ԱՄՆ դոլար, լվացքի մեքենաներ՝ 2,1 մլն ԱՄՆ դոլար, լաբորատոր սարքավորումներ՝ 8 մլն ԱՄՆ դոլար, մարդատար և բեռնատար մեքենաներ, համապատասխանաբար՝ 246,1 և 30,8 մլն ԱՄՆ դոլար, մեքենաների մասեր և պարագաներ՝ 14,6 մլն ԱՄՆ դոլար, մշակված և չմշակված ադամանդ՝ 156,1 մլն ԱՄՆ դոլար, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ 20,2 մլն ԱՄՆ դոլար, ոսկերչական իրեր՝ 15,8 մլն ԱՄՆ դոլար: 71-րդ և 87-րդ ապրանքախմբերի արտահանումը շարունակել է աճել նաև 2024 թ., իսկ ահա 84-րդ և 85-րդ ապրանքախմբերինը՝ նվազել:

Ի տարբերություն Ռուսաստանի, որի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ սկսեց աստիճանաբար նվազել 2022 թ. կտրուկ աճից հետո, դեպի ԱՄԷ արտահանման պարագայում նկատելի է հակառակ միտումը: 2022 թ. ԱՄԷ մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ սկսել է կայուն կերպով աճել և 2024 թ., կազմելով 40,2%, առաջին անգամ գերազանցել է մշտական առաջատար Ռուսաստանի մասնաբաժինը: Հիմնականում արտահանվել են անմշակ ոսկի, ոսկերչական իրեր և մշակված կամ չմշակված ադամանդներ: 2024 թ. «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» (71) ապրանքախումբը կազմել է ԱՄԷ ընդհանուր արտահանման 98,6%-ը:

2023 թվականից սկսած՝ ՀՀ արտահանման առաջատար ուղղությունների շարքում է հայտնվել Հոնկոնգը: 2024 թ. արտահանվել են ոսկի (1,1 մլրդ ԱՄՆ դո-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

ՀՀ արտահանման 10 ամենամեծ ուղղությունները, 2014-2024 թթ.[5]

[5] ՄԱԿ-ի (2025) «UN COMTRADE Datebase» առցանց տվյալների բազայի հիման վրա, հասանելի է՝ https://comtradeplus.un.org/

լար), մշակված կամ կիսամշակված պլատին (431,7 մլն ԱՄՆ դոլար), ոսկերչական իրեր (51,5 մլն ԱՄՆ դոլար):

2024 թ. դեպի վերոնշյալ երեք երկրներ՝ ԱՄԷ, Ռուսաստան և Հոնկոնգ, արտահանման մասնաբաժինը կազմել է 77,6%, ինչը նշանակում է, որ աշխարհագրորեն արտահանումը դարձել է էլ ավելի կենտրոնացված: 71-րդ, 84-րդ, 85-րդ և 87-րդ ապրանքախմբերի գծով արտահանման ծավալների աննախադեպ աճը տեղի է ունեցել վերաարտահանման հաշվին. ակնհայտ է, որ ՀՀ-ում չեն արտադրվում սմարթֆոններ, փոշեկուլներ, լվացքի մեքենաներ, ավտոմեքենաներ, և, բնականաբար, ՀՀ-ում առկա չեն նման ծավալների թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, ոսկու, ադամանդի պաշարներ:

Այսպիսով՝ 2022 թվականից ի վեր արձանագրված արտահանման էքսպոնենցիալ աճը հիմնականում պայմանավորված է եղել աշխարհաքաղաքական փոփոխություններով և առևտրային հոսքերի վերահասցեավորմամբ: Հայաստանը Ռուսաստանի և երրորդ երկրների միջև հանդես է եկել որպես տարանցիկ կապող օղակ, ինչը հանգեցրել է առևտրաշրջանառության զգալի աճի՝ միաժամանակ մեծացնելով արտահանման կախվածությունը սահմանափակ թվով երկրներից և ապրանքախմբերից:

Իհարկե, վերաարտահանման հաշվին արտահանման աճը դրական ազդեցություն է ունեցել տնտեսական աճի, արտարժութային եկամուտների աճի և առևտրային հաշվեկշռի ցուցանիշների բարելավման վրա: Սակայն, վերաարտահանման պարագայում ստեղծվում է նվազագույն ավելացված արժեք: Չնայած արտաքին առևտրային ցուցանիշների աճին՝ վերաարտահանումը չի նպաստում արտադրական ոլորտի զարգացմանը: Դա կրում է կարճաժամկետ բնույթ: Պատժամիջոցների վերացումից հետո ՌԴ-ից արտահանումը կիրականացվի նախկին երթուղիներով, և ՀՀ-ն կդադարի լինել կապող օղակ Ռուսաստանի և երրորդ երկրների միջև: Արտահանման հետագա աճ ապահովելու համար ՀՀ-ն պետք է բազմազանեցնի արտահանումն աշխարհագրական տեսանկյունից, ինչը կամրապնդի արտաքին առևտրի ոլորտի կայունությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, https://armstat.am/file/doc/99552373.pdf
2. ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/
3. ՄԱԿ-ի «UN COMTRADE Datebase» առցանց տվյալների բազա, https://comtradeplus.un.org/

Гоар АРУТЮНОВА

Магистрант 1-го курса кафедры "Международные экономические отношения", экономический факультет АГЭУ

АРМЕНИЯ И МИР

РЕЭКСПОРТ КАК ВРЕМЕННЫЙ ДВИГАТЕЛЬ ЭКОНОМИКИ РА

В статье были изучены тенденции экспорта Армении, изменения в структуре товарных групп и направлениях экспорта в 2014-2024 годах. В статье было показано, что резкий рост экспорта, зафиксированный с 2022 года, в основном был обусловлен не за счет экспорта традиционных товарных групп, а за счет «новых» товарных групп, появившихся в структуре экспорта. Сравнение объемов экспорта и импорта данных товарных групп показало, что зарегистрированный рост произошел за счет реэкспорта. Уровень географической концентрации также увеличился по мере увеличения зависимости от рынков в России, ОАЭ и Гонконге.

Ключевые слова: *экспорт, реэкспорт, товарная структура, санкции, геополитические изменения*

Gohar HARUTYUNOVA
First-year Master's student at the Chair of "International Economic Relations", Faculty of Economics, ASUE

ARMENIA AND WORLD

RE-EXPORT AS A TEMPORARY ENGINE OF THE RA ECONOMY

The paper examines export trends, the structure of non-food exports, and the main directions of change in the period 2014-2024. The paper demonstrates that the sharp increase in exports recorded since 2022 was mainly due not to export of traditional commodity groups, but to the emergence of "new" commodity groups within the export structure. A comparison of the export and import volumes of these product groups indicates that the registered growth was due to re-export activities. The level of geographical concentration has also increased, as dependence on markets in Russia, the UAE, and Hong Kong has increased.

Keywords: *export, re-export, commodity structure, sanctions, geopolitical changes*